INTERPOL

ԻՆՏԵՐՊՈԼ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2 0 1 3 թ.

THE 2013 GENERAL ASSEMBLY, HELD IN CARTAGENA, COLOMBIA

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
2. ՇՈՒՐՋՕՐՅԱ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ
3. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
4. ՕԳՆԵԼ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՒՅՆԱՑՆԵԼ ԴՐԱՆՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ
5. ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆԸ
6. ԱՄՐԱՊՆԴԵԼ ԿԱՊԸ ՄՅՈՒՍ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

2 - ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԻՆՏԵՐՊՈԼԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿՈՄՊԼԵՔՍԸ
Հանցավորության դեմ պայքարի ապագան
02
ԻՆՏԵՐՊՈԼԻ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ
Վերացնել ոստիկանական գործողությունների ընթացքում առաջացող խոչընդոտները
03
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
Պաշտպանել մեր սահմանները
07
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
Բարձրաձայնել ողջ աշխարհի ֆլորան և ֆաունան պահպանելու մասին
05
ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՂԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ
Մեր առօրյայի անտեսանելի վտանգները
06
I-CHEKIT ՆԱԽԱԳԻԾԸ
Ձեր անվտանգության համար
TURN BACK CRIME ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ
Միասին պայքարենք հանցավորության դեմ
04
ԻՆՏԵՐՊՈԼԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿՈՄՊԼԵՔՍԸ
Հանցավորության դեմ պայքարի ապագան
01
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՍՊՈՐՏՈՒՄ
Պաշտպանել սպորտը հետագա սերունդների համար
08

3 – ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ


Եվրոմիության հատուկ
ներկայացուցչական գրասենյակ
ԲԵԼԳԻԱ (Բրյուսել)
ՄԱԿ-ի հատուկ
ներկայացուցչական
գրասենյակ
ԱՄՆ (Նյու-Յորք)
Ինտերպոլի Գլխավոր
քարտուղարություն
ՖՐԱՆՍԻԱ (Լիոն)
Տարածաշրջանային
գրասենյակ
ԹԱՅԼԱՆԴ (Բանգոկ)
Տարածաշրջանային
գրասենյակ
ԿՈՏ ԴԻՎՈՒԱՐ (Աբիջան)
Տարածաշրջանային գրասենյակ
Էլ ՍԱԼՎԱԴՈՐ (Սան Սալվադոր)
Տարածաշրջանային գրասենյակ
ԿԱՄԵՐՈՒՆ (Յաունդե)
Ինտերպոլի համաշխարհային
ինովացիոն կոմպլեքսը
(դեռևս կառուցվում է)-ՍԻՆԳԱՊՈՒՐ
Տարածաշրջանային
գրասենյակ
ՔԵՆԻԱ (Նայրոբի)
Տարածաշրջանային
գրասենյակ
ԶԻՄԲԱԲՎԵ (Հարարե)
Տարածաշրջանային գրասենյակ
ԱՐԳԵՆՏԻՆԱ (Բուենոս Այրես)

4 - ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՏԵՐՊՈԼԻ ՊԱՀՈՑՆԵՐԸ

2013թ-ի ընթացքում ԻՆՏԵՐՊՈԼԻ անդամ երկրները 1.2 միլիարդից ավելի որոնումներ են իրականացրել Կազմակերպության տվյալների պահոցներով, որը կազմում է օրական 3.3 միլիոն որոնում կամ վայրկյանում 38 որոնում:



ԱՆՁԱՆՑ ՊԱՀՈՑ

Այս պահոցում հաշվառված են հետախուզվող անձանց, հանցագործների և անհայտ կորած անձանց տվյալները: Միայն վերջին երկու տարիների ընթացքում այս պահոցով կատարված որոնումների թիվը կրկնապատկվել է:



ՄԱՏՆԱԴՐՈՇՄՆԵՐԻ ՊԱՀՈՑ

Այս պահոցում հաշվառված են ԻՆՏԵՐՊՈԼԻ 190 անդամ երկրների կողմից տրամադրած մատնահետքերը, որոնք թույլ կտան նույնացնել փախուստի մեջ գտնվող հանցագործներին և անհայտ կորած անձանց: 2013թ.-ին այս պահոցում ամենամեծ թվով գրանցումներ են կատարել Միացյալ-Թագավորությունը՝ 35.858 մուքագրում, Իտալիան՝ 26.189 մուտքագրում և Գերմանիան՝ 14.823 մուտքագրում:



ԳԵՆԵՏԻԿ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ ՊԱՀՈՑ

Այս պահոցը, որն իր ստեղծման պահին՝ 2002թ-ին պարունակում էր ընդամենը 1 ԴՆԹ պրոֆիլ՝ զգալիորեն ընդլայնվել է: 2013թ-ին պահոցի օգտվողները օրական միջին հաշվով 31 որոնում են իրականացրել:



ԿՈՐԱԾ ԵՎ ԳՈՂԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՈՑ

Այս պահոցը Կազմակերպության ամենահաճախ օգտագործվող պահոցն է: 2013թ-ին այս պահոցով կատարվել է 800 միլիոն որոնում, կամ վայրկյանում 25 որոնում:



ԳՈՂԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՈՑ

Այս պահոցում հաշվառված է Կազմակերպության անդամ 130 երկրների կողմից գողացված հայտարարված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը: Պահոցում 2013թ-ի ընթացքում կատարվել են 116 միլիոն որոնումներ, որոնց արդյունքում գրանցվել է ժամում միջին հաշվարկով 13 համընկնում:



ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՈՑ

Բացի համապատասխան ոստիկանական մարմիններից, այս պահոցով ստուգումներ են իրականացրել 80 երկրների մուտքի թույլտվություն ստացած 1600 օգտվողներ՝ մաքսային մարմինների աշխատակիցներ, կառավարական մարմինների և մշակութային կառույցների ներկայացուցիչներ, արվեստի գործերի վաճառքի հարցերով մասնագիտացած անձինք և մշակութային արժեքների մասնավոր հավաքածու ունեցող անձինք:

ՔԱՐՏԵՐ

Ինտերպոլի քարտերը միջազգային ահազանգման գործիքներ են, որոնց նպատակն է Կազմակերպության անդամ բոլոր երկրներին տեղեկացնել հետախուզվող անձանց, վտանգավոր հանցագործների, սպառնալիքների և անհայտ կորած անձանց մասին: Դիֆուժները մեկ այլ տեսակի ահազանգման համակարգեր են: Դրանք փոխանցվում են անմիջականորեն տվյալ երկրի ԱԿԲ-ի կողմից Կազմակերպության՝ իրենց կողմից ընտրված անդամ երկրներին՝ անձի գտնվելու վայրը հայտնաբերելու կամ ձերբակալելու նպատակով, կամ որպես լրացուցիչ տեղեկատվություն՝ գործի ընթացքը ավարտին հասցնելու համար:



Հրատարակված քարտեր



Վավեր քարտեր



Հրատարակված դիֆուժներ



Վավեր դիֆուժներ



Հետախուզվող անձինք

Օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձինք



Անհայտ կորած անձինք



Ծանր հանցագործություններ կատարած անձինք



Չպարզված դիակներ



Վտանգավոր նյութեր, հանցավոր գործողություններ կամ կասկածելի իրադարձություններ, որոնք սպառնալիք են հանրության անվտանգության համար

Հանցագործների կողմից օգտագործված առարկաներ, սարքավորումներ կամ գործելաոճ

Անվտանգության խորհրդի 1267 Կոմիտեի ցուցակներում հաշվառված անձինք կամ կազմակերպություններ, որոնք կապ ունեն ԱԼ-Քաիդայի և Թալիբան շարժման հետ

2013թ-ի ընթացքում ավելի քան **13,000** քարտեր են հրատարակվել

որոնցից

8,857

հետախուզվող անձանց վերաբերյալ կարմիր անկյունով քարտերն են

1 տարվա ընթացքում ձերբակալվել են կարմիր անկյունով քարտերով հետախուզվող

1,749

անձինք